ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2021-2023թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (նոյեմբեր ամսվա վերջի դրությամբ)













2023թ նոյեմբերի 30-ի դրությամբ`

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 510,9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ` 7.7%-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 11.2 %-ով, իսկ 2021 թվականի նոյեմբերի 30-ի նկատմամբ` 1.4 %-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 297.0 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 8.2%-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 12.1%-ով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 1.7 %-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 213.9 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ` 1.4 %-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 4.3%-ով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 5,6 %-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 207.2 մլն ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ` 5.4 %-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 9,2%-ով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 22.4 %-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 675.7 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ`5,8 %-ով, 2022 թ.նոյեմբերի 30-ի նկատմամբ` 10.1 %-ով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 22.8 %-ով,

6)ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 531.5 մլն. ԱՄՆ դոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ` 3.6%-ով, 2022թ նոյեմբերի 30-ի նկատմամբ 6 %-ով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 14 %-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 352.5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ` 1.4%-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ 5.4 %-ով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` նվազելով` 21.7 %-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 944,5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ` 17,9 %-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 21.5 %-ով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 59.5 %-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 213.9 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ` 1.4%-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ 4.3 %-ով, իսկ 2021թ.նոյեմբերի 30-ի նկատմամբ` 5.6 %-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 844,.7 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.8 %-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` աճելով 3.5 %-ով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ նվազելով` 5.5%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4 մլրդ 831.0 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ` 15.2 %-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 19.2 %-ով, իսկ 2021թ նոյեմբերի 30-ի նկատմամբ` 92.6 %-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 531.5 մլն ԱՄՆ դոլար նվազելով` 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ` 3,6 %-ով, 2022թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ 6 %-ով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ` 14 %-ով:

ԱԺԲԳ




ՀՀ կառավարության արտաքին պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների, %




ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2023թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 433.5 մլն ԱՄՆդոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.6. %-ով, 2022թ.-ի նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ աճելով 4.4%-ով, իսկ . 2021 թ-ի նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ նվազելով 1 %-ով:

2023թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում `

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 78.78 %, ինչը ավել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.16 տոկոսային կետով, 2022թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից պակաս է 0.54 տոկոսային կետով, 2021թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից ավել՝1.49 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.95 %, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 1.13 տոկոսային կետով, 2022թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ ավել 0,59 տոկոսային կետով, իսկ 2021 թ, նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ պակաս1.39 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.27 %, ինչը 0,03 տոկոսային կետով պակաս է 2022 դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 2022թ.նոյեմբերի 30-ի ցուցանիշից պակաս է 0.05 տոկոսային կետով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից պակաս է 0.1 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարներ, (մլրդ դրամ, առանց մուրհակների սպասարկման ծախսերի)




ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված ներքին և արտաքին տոկոսավճարներ, մլրդ դրամ




2023թ. հունվար-նոյեմբերին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված `

1) տոկոսավճարները կազմել են 248.92 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 53.37 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 70.97 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 156.20 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 30.78 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 48.13 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 92.72 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 22.59 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 22.84մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




2023թ. հունվար-նոյեմբերին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 243.59 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 50.43 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 329.73մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 348.90 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 138.62 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 127.45 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -105.32 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 88.2մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 457.19 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2023թ. հունվար-նոյեմբերին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 149.41 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 96.9%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 115.4%-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 296.19 մլն դոլարի մայր գումար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 40.9 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 43 %-ով,

3) ստացվել են 217.64 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 30.4 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է՝37.2 %-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 445.60 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 55.7 %-ով, իսկ 2021 թ, ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 61.2 %-ով:

ԱԺԲԳ

## Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ




## Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր




## ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %




## ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %




2023թ. նոյեմբերի 30 դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 875.0 մլրդ դրամ, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. նոյեմբերի 30-ի և 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 378.7, 422.7 և .686.0 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 2896 օր, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 308 օրով, 2022թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է 415 օրով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է 942 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2023թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 6.95%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.66 տոկոսային կետով, 2022թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ ավել է 0.75 տոկոսային կետով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ ավել է 2.31 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2023թ. նոյեմբերի 30-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 3.21 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. նոյեեմբերի 30-ի և 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ համապատասխանաբար մեծ է 0.59 , 0.91 և 2.01 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 16.51 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 3.46 տոկոսային կետով, 2022թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ 3.76 տոկոսային կետով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ մեծ է 7.93 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 80.28 %, ինչը 2022թ . դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 4.05 տոկոսային կետով, 2022թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ 4.67 տոկոսային կետով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ 9.94 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ
# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2021-2023թթ. նոյեմբեր ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի




Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %




ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %




ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %




ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2023թ նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 7.2 տարի: Այս ցուցանիշը 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.6 տարով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 1.3 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանավծ է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2023թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 13.6 %, որը 2022թ. նոյեմբերի 30-ի և 2021թ. նոյեմբերի 30-ի մակարդակներից մեծ է համապատասխանաբար՝ 5.7 և 2.9 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2023թ.նոյեմբերի 30-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.9%, լողացող տոկոսադրույքով՝ 16.1%: Ընդ որում, 2023թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2022թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից պակաս է 0.2 տոկոսային կետով, իսկ 2021թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից ՝ ավել է 0.9 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 30%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2023թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 54,7%, ներքին պարտք՝ 45.3 %: Ընդ որում, 2023թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2022թ. նոյեմբերի 30-ի և 2021թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 3,5 և 16.4 տոկոսային կետերով: